

27895

336.216

Հ-14

1925-26 թ. թ.

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ

ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՐԿԸ

Փօխագրեց՝ Ս Ի Բ Ա Ս

300

2558-Ս

Պ Ե Տ Կ Ա Ն Հ ր ա ճ ա ռ ա կ յ ու թ յ ո Ն Ե

Յ Ի ր ե կ ա ն — 1925

09 . 7. 2013

27895

№ 26 ԿՈՄՅԵՐԻՑ ԳՐԱԴԱՐԱՆ № 26

336,213

2-14 ա

300

2558-ս

1925-26 թ. թ.

1003  
12704

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ  
ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՐԿԸ

Փոխարեց՝ Ս Ի Ր Ա Ս

Պետական Հրատարակչություն

Յերեվան—1925.

1925-26 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ  
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ  
ՀԱՐԿԸ

Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութիւն-  
ների Միութեան Կենտրոնական Գործադիր Կոմիտեն  
արդեն հրատարակել է 1925-26 թ.թ. գյուղմիասնար-  
կի դեկրետը:

Մեր գյուղացին այնքան էլ լավ ծանոթ չի այդ  
նոր դեկրետի հետ:

Մեր գյուղացուն, իսկ ամենից առաջ գյուղում աշ-  
խատող կոմունիստին և Կոմյերիտմիութեան անդամին  
անհրաժեշտ է իմանալ նոր որենքը, իմանալ նրա բո-  
լոր առավելութիւնները և նրա՝ այդ նոր որենքի տար-  
բերութիւնը անցյալ տարիների տուրքային որենք-  
ներից: Միայն այս բոլորն իմանալով գյուղացի կոմ-  
ունիստն ու Կոմյերիտմիութեան անդամը կարող են  
աջակցել, վոր այդ նոր որենքը դործադրվի այնպես,  
ինչպես պետքն է, ուրիշ խոսքով՝ գյուղատնտեսական  
հարկը հասկացվի այնպես, ինչպես ցանկանում են  
Կոմունիստական կուսակցութիւնն ու Խորհրդային  
Իշխանութիւնը:

Գյուղատնտեսական հարկը կազմում է մեր գյու-  
ղացու բյուջեյի մեծ տոկոսը. գյուղատնտեսական հար-  
կի հետ է կապված նրա տնտեսութեան կազմակերպումը  
և առաջադիմութիւնը:

Գյուղատնտեսական հարկի ձևից, նրա չափից, նրա նշանակումից ու հավաքումից, վերջապես այն մարդկանցից, վորոնք հավաքում են այդ հարկը,—այս բոլորից ե գյուղացին գաղափար կազմում, թե խորհրդագային իշխանութունը և կոմմունիստական կուսակցությունն ինչ քաղաքականութուն են վարում գյուղում: Ուստի և այս բոլոր խնդիրները պետք է հասկանան ու ըմբռնեն մեր բոլոր գյուղացիները: Հիմի տեսնենք, թե ինչ և ասում մեզ գյուղմիասնարկի նոր օրենքը:

**ՎՈՐ ՀՈՂԵՐԻՑ Ե ՀԱՐԿ ՎԵՐՑՎԵԼՈՒ:**

Ամենից առաջ մեզ անհրաժեշտ է իմանալ, թե ինչպիսի և վոր հողամասերից է հարկ վերցվելու:

Այս տարվա գյուղմիասնարկի դեկրետով հարկ է վերցվելու՝

1. Բոլոր աշնանացանի և գարնանացանքսի հողամասերից, ցելատեղերից և ապա այն հողամասերից, վորոնք պիտանի յեն ցանքսի և ծառեր աճեցնելու համար, բայց տիրոջ կողմից չեն ոգտադործված:

2. Խոտհարքներից:

3. Այգիներից և բոստաններից:

4. Բամբակի, չալթուկի և ծխախոտի ցանքսերից:

**ՎՈՐ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ՀԱՐԿ ՉԻ ՎԵՐՑՎԵԼՈՒ:**

Այն այգիները, վորոնք նոր են, և նոր է սկսվում պտղատու ծառերի աճեցումը, մինչև հինգ տարի չեն յենթարկվում հարկադրման:

Իրանք հարկադրման չեն յենթարկվում այն պարզ

պատճառով, վոր այդ նորատունկ այգիներն առաջին հինգ տարում վոչ մի արդյունք չեն տալիս, և նրանցից տուրք վերցնելը կլիներ անարդարացի:

Խաղողի նոր այգիները, ինչպես և պտղատու տնկարանները մինչև չորս տարի չեն յենթարկվում հարկադրման:

Քարոտ և ավազոտ հողամասերը, վորոնք անպետք են ցանքսերի և տնկարանների համար, նույնպես չեն յենթարկվում հարկադրման, բայց յեթե մի այգպիսի հողամաս գյուղացին մշակում է ու տնկում խաղողի վորդեր, մինչև տասը տարի ազատվում է հարկից:

Այն հողամասերը, վորոնք անպետք են ցանքսերի և տնկարանների համար, չեն յենթարկվել և չեն ել յենթարկվում հարկադրման, իսկ յեթե այդ հողամասերը վորեք անհատի կողմից վոռոգման կամ պարարտացման միջոցով պիտանի յեն դառնում, ապա այդ հողամասերն ևս մինչև յերեք տարի ազատվում են գյուղմիասնարկից:

**ՎՈՐ ՏՆԱՅԻՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻՑ Ե ՀԱՐԿ ՎԵՐՑՎԵԼՈՒ:**

Նոր գյուղատնտեսական միասնական հարկի դեկրետով Անդրկովկասում տուրքադրման են յենթարկվում հետևյալ տնային կենդանիները:

1. Յերեք տարեկանից մեծ ձիերը:

2. Չորս տարեկանից մեծ յեղները, եշերը և ջորիները:

3. Չորս տարեկանից մեծ ուղտերը:

4. Խոշոր յեղջուրավոր անասունները (բացի յեղաներից), վորոնք յերկու տարեկանից մեծ են:

5. Մեկ տարեկան այծերն ու վոչխարները:

ՎՈՐ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻՅ ՀԱՐԿ ՁԻ ՎԵՐՑՎԵԼՈՒ.

1. Անցյալ տարի հարկադրման են յենթարկվել խողերը, այս տարի նրանցից հարկ չի վերցվելու:

2. Այն տնտեսութունները, վորոնք ունեն 3 վոչխար և այժ, բոլորովին ազատվում են հարկից:

3. Այն տնտեսութունները, վորոնք ունեն մինչև 10 վոչխար և այժ, տուրք են տալիս կես չափով:

4. Այն տնտեսութունները, վորոնք ունեն 10-ից ավելի այժ և վոչխար, բոլորն ել յենթարկվում են հարկադրման լրիվ չափով:

Այս նոր տուրքադրումը ցույց և տալիս, վոր անցյալ տարի կենդանիներից տուրք ավելի շատ եր վերցված, համեմատած հողերին: Այս տարի զգալի չափով պակասել և այդ տուրքը:

Անցյալ տարի խոշոր յեղջյուրավոր անասունները և ձիերը հաշվվում եյին այսպես: Մեկ ձին կամ մեկ խոշոր յեղջյուրավոր կենդանին հավասար եր մեկ քառորդ դեսիատին վարելահողի, այս տարի այդ չափը պահված և միայն վոչ բանվոր անասունների համար, վորոնք տիրոջը բավականին յեկամուտ են բերում, իսկ բանվոր և խոշոր յեղջյուրավոր անասունները, այսինքն յեղը և գոմեջը հավասարեցված են յերկու տասերորդական դեսիատին, այսպիսով 5 հատ յեղ ունեցողը վճարում և ենքան տուրք, ինչքան վճարում և մեկ դեսիատին հող ունեցողը:

Տուրքի այս թեթևութունը հնարավորութուն և տալիս ավելի զարգացնելու մեր յերկրի անասնապահութունը:

ԻՆՉ ՀԱՇՎՈՎ Ե ՎԵՐՑՎԵԼՈՒ ՏՈՒՐՔԸ.

Վերևի ասածներից պարզվում և, վոր տուրքն ամեն տնտեսութունից վերցվելու յե համեմատած իրա տված յեկամուտին, են ել պակասացրած չափով:

Տնտեսութուններից տուրքը վերցվելու յե վարելահողի հաշվով. այդ պատճառով ել տնտեսության մեջ յեղած բոլոր մյուս առարկաներն ել վեր են ածվելու վարելահողի, ամեն մեկն ըստ իր յեկամուտի չափի:

Անդրկովկասի համար վերցված և հետևյալ նորման.

Մեկ դեսիատին խոտհարքը հավասար և կես դեսիատին վարելահողի: Այսինքն մեկ դեսիատին խոտհարքի համար վերցվում և ենքան տուրք, վորքան կես դեսիատին վարելահողից:

Մեկ ձին, ուղտը կամ ջորին, նույնպես խոշոր յեղջյուրավոր կենդանիները (բացի յեղներից) հավասար են չորս տասերորդ դեսիատին վարելահողի, այսինքն յերկու և կես խոշոր յեղջյուրավոր կենդանուց (բացի յեղներից) վերցվելու յե այնքան տուրք, վորքան մեկ դեսիատին վարելահողից:

Մեկ յեղը կամ եջը հավասար և յերկու տասերորդ դեսիատին վարելահողի, այսինքն հինգ յեղից կամ եջից ենքան և հարկ վերցվելու, վորքան մեկ դեսիատին վարելահողից:

Մեկ դեսիատին բանջարանոցը հավասար և 2 դեսիատին վարելահողի վրաստանում և Ադրբեջանում, իսկ Հայաստանում հավասար և մեկ և ութ տասերորդ

դական\* Դեսիատին վարելահողի, այսինքն Հայաստանի բանջարանոցները վորոշ չափով ավելի պակաս են տուրք տալու:

Մեկ դեսիատին խաղողի այգին Եջմիածնի գավառի Աշտարակ, Ոշական, Ղզլթամուր և Հաջիղարա գյուղերում հավասար է 3 դեսիատին վարելահողի, իսկ մյուս տեղերում մեկ և կես դեսիատինի:

Մեկ դեսիատին ծխախոտն Աբխազիայում հավասար է 3 դեսիատին վարելահողի, Լագոդախում, Սղնադում և Զաքաթալայում յերկու դեսիատինի, իսկ Անդըրկովկասի մյուս վայրերում, ինչպես նաև Հայաստանում, հավասար է մեկ և կես դեսիատին վարելահողի:

Այս ևս ցույց է տալիս գյուղամրասհարկի նոր որենքի առավելութունը նրանով, վոր միատեսակ մշակությամբ զբաղվող տնտեսություններից զանազան տեղերում, զանազան չափով է տուրք վերցվում, նայած թե վորտեղ այդ տնտեսությունը ինչքան յեկամուտ է տալիս:

Մեկ դեսիատին չալթուկը հավասարեցված է յերկու դեսիատին վարելահողի:

Մեկ դեսիատին բամբակը հավասարեցված է յերկու դեսիատին վարելահողի:

Անցյալ տարի մեկ դեսիատին բամբակը հավասարեցված էր յերեք դեսիատին վարելահողի: Այս տարի բամբակի տուրքը պակասեցված է, վորպեսզի

\* Յերբ ասում ենք ուժ տասերորդական, պէտք է հասկանալ՝ մեկ դեսիատինը բաժանած 40 մասի յեվ նրանից վերցրած ուժը. թվանշանով մեկ յեվ ուժ տասերորդական դեսիատինը գրվում է այսպես՝ 1,8:

հնարավորութուն տրվի բամբակ ցանոցներին ևս լայնացնելու իրենց տնտեսությունը:

Այս նորման, վոր մենք բերինք, կազմված է ամբողջ Անդրկովկասի համար: Ամեն մի կառավարություն, նայած տեղական պայմաններին, կարող է այս նորման փոխել, միայն այն պայմանով, վոր չպակասի միատուրքի ընդհանուր գումարը:

ՏՈՒՐՔԻ ՆՇԱՆԱԿՈՒՄԸ.

Այս տարի ամեն մի տնտեսություն տալու յի տուրք յերեք նորմայով:

Որինակ, յենթադրենք, թե մի տնտեսության մեջ բոլոր հողերը, կենդանիները հաշվի յեն առնված, վերածված վարելահողի, և այդ տնտեսությունը վարելահողի հաշվով ունի 5 դեսիատին, նրա ընտանիքի անդամների թիվը էլ 5 հոգի յեն:

Մենք ասինք, վոր գյուղացին տուրք է տալու յերեք նորմայով: Առաջին նորման ամենապակասն է, այսինքն ամենաքիչ հարկն է վերցնում, յերկրորդ նորման միքիչ ավել, իսկ յերրորդ նորման ավելի բարձր է:

**Հիւսմ—յերե 5 հոգի ունեցող մի տնտեսություն ունի 5 դեսիատին վարելահող, ի՞նչպես պե՞տք է վերածել նորմաների, վոր գյուղացին իմանա, քե ի՞նչան տուրք է վճարելու:**

Այդ բաժանումը գուցե միքիչ դժվար թվա, բայց յեթե ուշադրությամբ մտտենանք խնդրին, կլուծվի:

Առաջին նորմայով գյուղացին վճարում է միայն մեկ քառորդ դեսիատինի համար և յեթե նա հինգ անձ է, ուրեմն 5 անգամ մեկ քառորդ, այսինքն 1 և մեկ քառորդ դեսիատինի համար, և յեթե վերցնենք, վոր նա ամեն

մեկ դեսիատինի համար վճարելու յե 60 կոպեկ (Հայաստանում յերեւի մոտավորապէս այս նորման կլինի), ապա գյուղացին վճարելու յե 75 կ. մեկ և մեկ քառորդ դեսիատինի համար:

Յերկրորդ նորմայով նա վճարելու յե մեկ քառորդից մինչև յերեք քառորդ դեսիատինի համար: Վերը մենք հաշվեցինք մեկ քառորդ դեսիատինը, ուստի մնում է կես սական դեսիատին, 5 անգամ կես դեսիատինն անում է 2 և կես դեսիատին և յեթի վերցնենք, վոր այս յերկրորդ նորմայով ել գյուղացին վճարելու յե ամեն մեկ դեսիատինին 1 ու 35 կոպեկ, ուրեմն գյուղացին վճարելու յե 3 ու 38 կ. իր յերկու և կես դեսիատին հողամասի համար:

Մնում է յերրորդ նորման. մենք տեսանք, վոր գյուղացին վճարեց 1 և մեկ քառորդ դեսիատինին առաջին նորմայով և յերկու և կես դեսիատինին յերկրորդ նորմայով, ընդամենը նա վճարել է 3 և 3 քառորդ դեսիատինի, մնում է 1 և 1 քառորդ դեսիատինը: Յերրորդ նորման ամենաբարձրն է՝ մեկ դեսիատինը վճարում է 4 ու 60 կոպեկ. մենք տեսանք, վոր գյուղացուն մնացել է վճարելու 1 և 1 քառորդ դեսիատինի տուրքը. մեկ դեսիատինին յերրորդ նորմայով նա վճարում է 4 ու 60 կ. և 1 քառորդին 1 ու 15 կ., ընդամենը 5 ու 75 կ.:

Այսպիսով գյուղացին վճարելու յե՝

|                                   |                            |            |
|-----------------------------------|----------------------------|------------|
| 1 <sup>1</sup> / <sub>4</sub>     | դեսիատինին առաջին նորմայով | 75 կ.      |
| 2 <sup>1</sup> / <sub>2</sub>     | » յերկրորդ նորմայով        | 3 ու 38 կ. |
| 1 <sup>1</sup> / <sub>4</sub>     | » յերրորդ նորմայով         | 5 ու 75 կ. |
| ընդամենը 5 դեսիատինին վճարելու յե |                            | 9 ու 88 կ. |

### ՅԵՐԲ ՅԵՎ ԳԱՆԻ ԱՆԳԱՄ Ե ՎՃԱՐՎԵԼՈՒ ՀԱՐԿԸ.

Անդրկովկասի համար տուրքի վճարման ժամկետները հետևյալներն են.—

1. 1925 թ. նոյեմբեր 1-ը.
2. 1926 թ. հունվարի 1-ը.
3. 1926 թ. մարտի 1-ը.

Առաջին անգամին, այսինքն մինչև նոյեմբ. 1-ը գյուղացին վճարելու յե իր տուրքի 50 տոկոսը կամ կեսը, յերկրորդ հերթին 30 տոկոսը և յերրորդ հերթին 20 տոկոսը:

Նշանակված ժամանակամիջոցներում գյուղմիասնարկը պետք է ամբողջովին գանձված լինի, այդ պատճառով ել ժողովուրդը Հայաստանում նշանակում է յուրաքանչյուր գավառում և գավառամասերում տուրքերը վճարելու ժամկետներ, վորպեսզի նշանակված որը տուրքն ամբողջովին գանձված լինի:

### ԻՆՉՊԵՍ Ե ԿԱԶՄՎԱԾ ՆՈՐ ՈՐԵՆՔԸ.

Մենք մինչև հիմա տեսանք, թե որենքում ինչ երասված տուրքը նշանակելու և գանձելու չափի ու ձևի մասին:

Բայց խորհրդային իշխանությունը և կոմունիստական կուսակցությունը գյուղում ունեն մի շարք խնդիրներ իրագործելու, այդ պատճառով ել գյուղմիասնարկի գեղերտի ամեն մի հողվածը կազմված է այնպես, վոր համապատասխանում է մեր գյուղում տարվող քաղաքականության:

Ի՞նչ հիմնական խնդիրներ ունի իրագործելու գյուղում մեր կուսակցությունը:

1. գյուղի արտադրական ուժերի (կամ գյուղացու սնեստուքայան) բարձրացումը, 2. կոփվ ապուրի-նուքյուցների (որեքնից հակառակ գործերի) գեմ, 3. գյուղացիութայան գրավումը գեպի խորհրդային շինարարութիւնը:

Այ հենց այս յերեք գլխավոր խնդիրներն են նախատեսուված են գյուղատնտեսական միասնական հարկի նոր որոնքում:

ՆՈՐ ՈՐԵՆՔԸ ՅԵՎ «ԳՅՈՒՂԻ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՈՒՇԵՐԻ ԲԱՐՁՐԱՑՈՒՄԸ»:

Ի՞նչ է հարկավոր գյուղի արտադրական ուժերը կամ գյուղատնտեսութիւնը բարձրացնելու համար: Ամենից առաջ հարկավոր է գյուղացուց վերցընել այնքան տուրք, վոր չազդի նրա տնտեսութիւնը զարգացման վրա. նա տուրքը տալուց հետո պիտի իր տրամադրութիւն տակ ունենա այնքան միջոցներ, վոր թէ ինքն ապրի և թէ իր տնտեսութիւն մեջ բարեփոխութիւններ մտցնի: Յերք տուրքն այս ձևի լինի, գյուղացին կաշխատի ավելի շատ արտադրել, իսկ ինչքան գյուղացին շատ արտադրի, այնքան ոգուտ է թէ իրան, թէ խորհրդային իշխանութիւնը. պիտի գյուղացուց հաստատ համոզել, վոր ցա լիակատար ու իր ուզած ձեւով կարող է ոգսվել իր աշխատանքի արդյունքներէ: Գյուղացին տնտեսապես պիտի լինի ապահով, իսկ իր տնտեսական հաշիվներն են պարզ ու իրան հասկանալի:

Գյուղացին յերեք չի կարող ճիշտ ու հաստատ կերպով կառուցել իր տնտեսութիւնը, յերք նա չի ի-

մանում, թէ վորքան է պարտավոր հարկ տալու կառավարութիւնը: Նոր գյուղատնտեսական հարկը այս հնարավորութիւնը տալիս է գյուղացուն: Ինչո՞ւ: Վորովհետև՝

1. Զգալի չափով պակասել է տուրքը:

Կավ տնտեսութիւն կազմելու համար անհրաժեշտ է, վոր գյուղացու հաշիվն են գլխից պարզ լինի, իմանա, թէ իր տնտեսութիւնից ինչքան է մնում իրան, այդ պատճառով էլ՝

2. Նոր որեքնը այնպես է կազմված, վոր ամեն գյուղացի առաջուց կիմանա, քե իրանից վորքան է տուրք վերցվելու:

3. Մի անգամ ցեանակված տուրք վոչ մի գեպում այլեւս չի կարող ավելացվել:

ԻՆՉՔԱՆ Ե ՊԱԿԱՍԵԼ ՏՈՒՐՔԸ:

Անցյալ տարի ամբողջ խորհրդային Միութիւն մեջ վորոշված են հավաքել 470 միլիոն ուրբուր գյուղատնտեսական հարկ: Իսկ այս տարի համամիութենական կենտրոնական Գործադիր կոմիտեյի XII-րդ նստաշրջանը վորոշեց հավաքել 300 միլիոն ու:

Բայց յերք համամիութենական կենտրոնական Ժողովուրդի միասնարկի նոր որեքն են ինքնում, մեր ժողովրդական տնտեսութիւնը ընդհանուր դրութիւնը ցույց տվեց, վոր հետագայում կարելի չէ գյուղատնտեսական հարկը ավելի պակասեցնել:

Այդ պատճառով էլ ցոր որեքնով վորոշված է հավաքել 280 միլիոն ուրբուրի հարկ ամբողջ խորհրդային Միութիւնից, իսկ մեքն քեսանք, վոր անցյալ քա-

րի վորոճված եր հավաքել 470 միլիոն, իսկ Կենսագործկումի III-րդ նստաօրջածք վորոճել եր հավաքել 300 միլիոն ուլբի:

Սյսպիսոսկ այս օտրի օուլբը պակասել ե 190 միլիոն ուլբով կամ 40 օոկոսով, ուլբի խոսով՝ յեթե գյուղացին անցյալ օտրի օալիս եր մեկ ուլբի հարկ, այս օտրի օալու յե 60 կոպեկ:

Յեթե վերցնենք Սորհրդային Հայաստանը, կըտեսնենք նույն գրությունը: Անցյալ տարի հավաքվել եր մեկ ու կես միլիոն ուլբի հարկ, իսկ այս տարի վորոճված ե զրա փոխարեն հավաքել միայն մեկ միլիոն: Նօսանկում ե՝ Հայաստանի գյուղացիութիւնը այս օտրի կես միլիոն, կամ երկգ հարյուր հազար ուլբի ավելի պակաս ե օուլբ օալու, քան անցյալ օտրի:

Յեթե այս տարվա տուրքը համեմատենք անցյալ տարվա գյուղացու վճարած տուրքի հետ, կստացվի հետևյալ պատկերը.—

Մինչև 1925 թ. մայիսի մեկը ամբողջ Սոր. Միության մեջ հավաքված եր 341 միլ. ուլբի: Նոր որենքով, յիրը արդեն տուրքից աղատված կլինեն չքավորները, և ապա վոմանց տուրքը զիջված կլինի, որինակ՝ կարմիր բանակայինների ընտանիքներինը, բնական պատահարներից տուժած գյուղական տնտեսութիւններինը (Հայաստանում ցրտահարութիւն), գյուղատնտեսութիւնի բարձրացման համար տրվելիք վճարը, թույլ տնտեսութիւններին տրվելիք ոգնութիւնը և այլն, — այս բոլորը գուրս գալուց հետո գյուղացիութիւնը հարկ կվճարի վոչ ավելի, քան 240 միլիոն ուլբի:

Այս նշանակում ե, վոր գյուղացին նոր որենքով վճարելու յե 240 միլ. ուլբի տուրք և այն ել միայն

այն զեպրում, յեթե բերքը համեմատած նախկին տարիներին հետ, միջակ լինի: Սա յել գալիս ե ապացուցելու նոր որենքի առավելութիւնը. վորովհետև Հնայած անցյալ տարի բերքը վատ ե յեղել, բայց գյուղացիութիւնն ավելի շատ ե տուրք վճարել, քան վճարելու յե այս տարի՝ յեթե նույնիսկ բերքը լավ լինի. իսկ յեթե բերքը վորոճ տեղերում վատ լինի, ապա դա նկատի յե առնվելու, և տուրքը կամ ամբողջովին զիջվելու յե կամ վորոճ չափով պակասեցվելու յե, վոր տնտեսատերը հնարավորութիւն ունենա հետագայում վերականգնելու իր տնտեսութիւնը:

Ամեն մի գյուղացու համար միանգամայն պարզ ե, վոր հարկի պակասեցումը, թեկուզ մեկ յերրորդով, նրա համար զգալի թեթևութիւն ե:

Ամեն մի կոմ. մուսիստի և կոմյերիտմիության անգամի պարտականութիւնն և իր գյուղում յուրաքանչյուր գյուղացու՝ հենց իր տնտեսութիւնի վրա ցույց տալ մեր ցույց տված ձևով, թե նա ինչքան տուրք ե վճարել անցյալ տարի, հաշված նաև տեղական տուրքերը, և ինչքան ե վճարելու այս տարի:

ՀԱՐԿԻ ՊԱԿԱՍԵՑՈՒՄԸ ՊԵՏԻ ՑՈՒՅՑ ՏԱԼ ԿԵՆԴԱՆԻ ՈՐԻՆԱԿՆԵՐՈՎ.

Հարկավոր ե վոչ միայն խոսքով ասել նոր որենքի առավելութիւնները, այլ այդ ապացուցել ամեն գյուղացու՝ հաշվելով նրա տնտեսութիւնը և նրանից վերցրած առաջվա ու այժմյան հարկը:

Սա ազիտացիայի ու համոզելու ամենալավ ձևն ե:

ՀԵՆՑ ՀԻՄԱ ՊԻՏԻ ԱՍԵԼ ԳՅՈՒՂԱՑՈՒՆ, ԹԵ ԻՆՉՔԱՆ  
Ե ՆԱ ՀԱՐԿ ՎՃԱՐԵԼՈՒ:

Գյուղմիասնարկի նոր որենքով պետք է հիմիկ-  
վանից հաշվառման յնութարկվի գյուղացու ցանքսը, այ-  
գին, մանր ու խոշոր կենդանիները և գյուղացիներին  
հայեցվի, քե ամեն մեկը վորքան է սուրբ սալու:

Ամեն մի գյուղացի՝ իմանալով, քե ինչքան սուրբ  
պիտի սա պետարյանը, կարող է սկզբից իր գործն  
ու աշխատանքները այնպես դասավորել, վոր ժամա-  
նակին կարողանա վնարել իր սուրբը:

Ամեն մի գավառային գործադիր կոմիտե պար-  
տավոր է այս պարտադիր վորոշումը ժամանակին  
լայն կերպով տարածել գյուղացիութայն մեջ, վորպես-  
զի նրանք հենց գլխից ծանոթ լինեն գյուղմիաս-  
նարկին վերաբերող որենքներին:

Անհրաժեշտ է, վոր այս պարտադիր վորոշումը,  
վորի հիման վրա ամեն մի գյուղացի պիտի իմանա,  
թե ինքը ինչքան է տուրք տալու,— ԵՐՉԱՆՆԵՐԻՆ ԵՎ  
ԳՅՈՒՂԵՐԻՆ ՎՈՐԲԱՆ ԿԱՐԵԼԻ ԵՑ ԵՈՒՏ ԿԱՅԵՎԻ:

Գյուղացի կոմիտենիստի և կոմիտեիտմիութայն  
անդամի պարտականութունն է ոգնել գյուղացիներ-  
րին իմանալու, թե նա միասնարկի նոր որենքով վոր-  
քան է տուրք տալու: Այս պարտականությունը վոչ բարգ  
է, վոչ էլ զժվար, բայց իր նշանակությամբ մեծ սեղ  
է բռնում գյուղում կասարվող աշխատանքների մեջ:

Այն հանգամանքը, վոր ամեն մի գյուղական  
տնտեսութուն վարող այժմվանից կիմանա, թե ին-  
քը ինչքան է տուրք տալու, և թե, համեմատած ան-  
ցյալ տարվա հետ այս տարի նրա տուրքը պակասել

է,— Խրան կլինի, վոր իր սնեստությունը ամրացնի  
յեվ բարձրացնի նրա արտադրական ուժերը:

Նա կարտադրի, կգնի, կվաճառի, մի խոսքով՝  
կկազմակերպի իր տնտեսութունն այնպես, ինչպես  
ձեռնառու յե իրան:

ՆՈՐ ՈՐԵՆՔԸ ՅԵՎ «ԿՈՒՎ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՈՐԻՆԱ-  
ԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ» ԼՈՁՈՒՆԳԸ:

Գյուղում կատարվող աշխատանքների մեջ մեր  
կուսակցութայն յերկրորդ հիմնական խնդիրն է՝ կովել  
ապորինութունների կամ գյուղերում կատարվող որեն-  
քին հակառակ գործերի դեմ:

Անցյալ տարի գյուղմիասնարկի գանձման ժամա-  
նակ տեղի յեն ունեցել շատ ապորինութուններ, և  
պաշտոնյաներից շահերն ինքնագլուխ անթույլատրելի  
գործեր են կատարել:

Դժբախտութունը վոչ միայն այն էր, վոր ան-  
ցյալ տարի գյուղմիասնարկը հավաքող պաշտոնյաներն  
ապորինի գործեր և յին կատարում, այլ և այն, վոր  
անցյալ տարվա որենքն այնպես էր կազմված, վոր  
հնարավոր էր խախտել այն:

Չի կարելի, իհարկե, ասել, վոր այս նոր որենքի  
շնորհիվ բոլորովին հնարավոր չէ ապորինի գործեր  
կատարել: Բայց որեքի ամեն մի հոգվածն այնպես է  
կազմված, այնպիսի կարգ է գրված, վոր այդ որեքը  
յեվ կարգը խախտելը ԵՍ Գժվար է, ուրեմն յեվ ա-  
պորինի գործեր կասարելն անհնար:

1001  
1921

**ՏՈՒՐՔ ՎՃԱՐԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՄԻՋՈՅԸ.**

Բավական է հիշել անցյալ տարվա գյուղացիներին արդարացի բողոքն այն մասին, վոր տուրքը վճարելու ժամանակը փոփոխվում էր:

Նոր որենքով այնպիսի կարգ է դրված, վոր տուրք վճարելուց միքանի ամիս առաջ գործկոմիներին հրատարակած պարտադիր վորոշման մեջ, վորտեղ պետք է ասված լինի, թե ամեն մի տնտեսութուն ինչքան է տուրք տալու, այն հարկաբերում, վոր ամեն մի գյուղացի կստանա մինչեվ ոգոսոս ամիսը, նիստ կերպով գրված կլինի, քե գյուղացին ինչքան յեվ մինչեվ յերբ է իր տուրքը տալու:

Այստեղ որենքը կտուկ կերպով արգելում է տուրքակա իսխանութուններին վորեվ փոփոխութուն մտնել ամբողջ տուրքի հավանական ժամանակամիջոցում:

Վոչ վոր իրավունք չունի գյուղացուց պահանջել, վոր իր տուրքը վճարի հարկաթերթում նշանակված ժամանակից առաջ: Վոչ վոր իրավունք չունի պահանջելու ավելին այն տուրքից, ինչ նշանակված է նույն հարկաթերթում:

ՅԵՐԲ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԻ ԴԺԲԱՆՏՈՒԹՅՈՒՆ Ե  
ՊԱՏԱՀՈՒՄ, ԱՐԴՅՈՒՄ ՆՐԱՆ ՎՈՐԵՎԵ ԶԻՋՈՒՄ  
ԱՐՎԵԼՈՒ ՅԵ.—

Այն: Մինչդեռ անցյալ տարվա որենքում այդ մասին վորոշ վոչինչ չէր ասված և տեղերում, նայած հանգամանքներին, այդպիսի դեպքում զիջում չէր:

քեմն արվում էր, յերբեմն վոչ: Յեթե զիջում էլ արվում էր, ապա այդ չէր բավարարում տուժած տընտեսութուններին: Յեվ այդ բոլորը պատճառ էր դառնում գյուղացիների դժգոհության:

Այս տարվա որենքում պարզ կերպով ասված է, վոր յերբ գյուղացու տնտեսութունը վորեվ գոթախոտութուն է պատահում, բերք չի լինում, այդ դեպքում տուրքը կամ ամբողջովին է զիջվում, այսինքն այդ վճարված գյուղացին էլ բոլորովին տուրք չի տալիս, կամ տալիս է պակասացրած չափով:

**ՎՈՉ ՄԻ ՏՈՒԳԱՆՔ.**

Կոմիտասկոթյան 14-րդ կոնֆերենցիան վորոշեց, վոր գյուղմիասնարկի հավաքման ժամանակ պետք է վերացնել տուրքները: Հավանական է, վոր շուտով խորհրդային իշխանութունն էլ այդ իմաստով վորոշում կկայացնի: Այսպիսով այս տարի միասնարկի հավաքման ժամանակ վոչ մի վարչական միջոց չի գործադրվելու:

Վոչ մի վարչական ներքակալութուն յեվ տուրքակա չպիտի լինի:

Այն գյուղացիները, վորոնք գյուղմիասնարկի հավաքման վերաբերող հանցանքներ կկատարեն, պատասխանատու կլինեն դատարանի առաջ, ինչպես պատասխանատու յեն իրենց գործած հանցանքների համար խորհրդային Հանրապետության բոլոր մյուս քաղաքացիները:

Ե՛ւջ ՊԵՏՔ Ե ԱՆԻ ԳՅՈՒՂԻ ԿՈՄՄՈՒՆԻՍՏԸ ՅԵՎ  
 ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄԸ ԱՊՈՐԻՆՈՒԹՅՈՒՆ-  
 ՆԵՐԻ ԴԵՄ ԿՈՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ.

Կոմմունիստի և Կոմյերիտմիութեան անդամի գլուխավոր պարտականութիւնն է ամենակատարի կռիւ մղել գյուղում կատարվող ապօրինութիւններն և տեղական իշխանութիւններին ինքնագլուխ գործերի դեմ: Այդ կռիւն նա պիտի վարի կոնֆերենցիաներում, ժողովներում, գրույցներում և անանձին գյուղացիների հետ խոսելիս և ապացուցի, թե վորն է ճիշտը և վորն է սխալը: Պիտի ոգնել գյուղացիներին բողոքելու, վորսեղ պե՛տք է, սեղի ունեցած ապօրինի գործերի դեմ:

Յեթե շրջգործկումը, գյուղխորհուրդը կամ ֆինտեսուչը տուրքի հավաքման ժամանակ կատարում են ապօրինութիւններ, ապա այդ հարցը պիտի քննել գյուղ-ըջիջներն նիստում ու այդ մասին գրել թերթերում:

Գյուղի կոմմունիստի և Կոմյերիտմիութեան անդամի պարտականութիւնը վոչ թե այն է, վոր աշխատի աշակցել ժամանակին և լրիվ տուրքը հավաքելուն, այլ գլխավորապես բացատրել ու հասկացնի գյուղացուն նրա բոլոր իրավունքներն ու պարտականութիւնները: Հասկապես գյուղացու ուսուցումը պիտի գարձնել գյուղմիասնարկի պակասացած լինելու վրա, բացատրելով դրա պատճառները: Յերբ այս բոլորն իմանան տուրք տվող գյուղացիները,

ըր, հենց իրենք կաշխատեն, առանց վորևէ դժվարութիւն հարուցելու, ժամանակին և լրիվ վճարելու գյուղմիասնարկը:

«ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԱՇԽՈՒԺԱՑՈՒՄ» ԼՈՁՈՒՆԳՆ ՈՒ  
 ՆՈՐ ՈՐԵՆՔԸ.

Յերբորդ հիմնական խնդիրը, վոր առաջադրում են իրենց Կոմկուսակցութիւնն ու խորհ. իշխանութիւնը գյուղում, դա գյուղական լայն մասսաներին դեպի խորհրդային շինարարութիւն գրավելն է:

Այդ սապարիզում մեր աշխատանքներն այնքան ել լավ չեն դրված: Ամեն անգամ մենք չենք կարողացել լրիվ չափով իրագործել վաղեմի իշխիչ ավանդը՝ «Չհրամայել գյուղացիներին»:

Շատ դեպքերում գյուղացիական լայն մասսաները հեռացել են իրենց գյուղխորհուրդներից, շըրջգործկոմիտեներից—մի խոսքով չեն հետաքրքրվել խորհրդային իշխանութեամբ ու նրա գործերով: Իսկ գաւանգում վսանգն է հեց խորհրդային իշխանութեան համար, ամենամեծ վսանգն է հեղափոխութեան ցուցանիստը: Խորհ. իշխանութեանը կարող է զարգանալ ու ամրանալ միայն այն գեպում, յերբ բանվորն ու գյուղացին ամուր կապերով կապված են իրար հետ, հետաքրքրվում են իրար գործքամբ:

ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐ.

Գյուղմիասնարկի հավաքման ընդհանուր դեկավորութիւնն ու պատասխանատվութիւնը ընկնում է ֆինանսական որգանների վրա:

Այդպես է յեղել մինչև այժմ:

Գյուղմիասնարկի հետ կապված բոլոր խնդիրները լուծումը զլլապարապես կապված է յեղել գավառային հարկային հանձնաժողովները հետ, վորոնց մեջ տուրք վճարող գյուղացիութեան ներկայացուցիչը չի յեղել:

Բացի այդ, հարկային հանձնաժողովները գտնվում էյին գյուղերից հեռու, նրանք ամեն ժամանակ բարեխիղճ կերպով չէյին կարող ուշադրութեամբ նայել, քննել ու լուծել գյուղացիները հազարավոր խնդիրներն ու բողոքները:

Վերջիվերջոյ յեթե խնդիրներն ու բողոքներն ել քննվում էյին, այդ ավելի շուտ ձևական ընույթ ունեւր, վորովհետեւ խնդիրը քննող հանձնաժողովը ծանոթ չեւր խնդրատու գյուղացու տնտեսութեան հետ, իսկ շատ անգամ ել խնդիրներն ու բողոքներն այնքան ուշ էյին քննվում, վոր բոլորովին իրանց նշանակութեամբ կորցընում էյին: Յենթադրենք՝ մի գյուղացի խնդիր ե տվել, վոր տուրքը չի կարող տալ. այդ խնդիրը գավառային հանձնաժողովն այնքան ուշ եր քննում, վոր գյուղում արդեն գյուղացուց տուրքը հավաքած էյին լինում: Իհարկե, տուրքը հավաքելուց հետո այդ խնդրի քննութեամբ կորցնում եր իր նշանակութեամբ:

**ՇՐՋԱՆԱՅԻՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐ.**

Այդ պատճառով ել գյուղմիասնարկի նոր որենքում այսպիսի կանոն ե գրված—այն բոլոր խնդիրները, վորոնք կապ ունեն գյուղացիներից սուրբ հավաքելու հետ, պիտի լուծվեն իրենց գյուղացիների հետ, Երջանային հարկային հանձնաժողովների միջոցով:

**Ամեն Երջանում սուրբի հավաքման ժամանակ աշխատելու յե Երջանային հարկային հանձնաժողովը:**

Նրա կազմը հինգ հոգուց ե, վորտեղ մասնակցում են տեղական գյուղացիութեան ներկայացուցիչները, ապա շրջաբովորմի նախագահը (վորը ե լինելու յե կոմիտեայի նախագահ) ե գյուղի փոխադարձ ոգնութեան կոմիտեայի ներկայացուցիչը, նաե մի ներկայացուցիչ այն գյուղից, վորի բնակիչի գիտումը քննվում ե այդ նիստում:

Ամեն մի գյուղացու համար պիտի պարզ լինի, թե Երջանային հարկային հանձնաժողովը, վորի մեջ կա սուրբ վճարող գյուղացու ներկայացուցիչը, գյուղմիասնարկի հետ կապ ունեցող բոլոր գործերը վճարվելու յեն համապատասխան գյուղացու Ետերի:

Այս շրջանային հարկային հանձնաժողովների պարտականութեամբն ե քննել ու լուծել գյուղացիներից ստացված այն բոլոր բողոքները, վորոնք վերաբերում են գյուղմիասնարկի նշանակմանն ու հավաքմանը: Գյուղացին այդ հանձնաժողովին կարող ե բողոքել յերբ նկատի, վոր իր ունեցածը ճիշտ չեն հաշվել, յերբ տուրք շատ են նշանակել, յերբ տուրքը ժամանակից շուտ են պահանջում, յերբ տուրքը ավել են պահանջում, քան նշանակված ե հարկաթերթում, յերբ ավել ե վճարել ու չի կարողանում ավելին յետ ստանալ ե այլն:

Այդ նույն շրջանային հարկային հանձնաժողովների վրա յե ընկնում նաե հարկատուներին տալու զանազան արտոնութեամբներ, զիջել կամ պակասեցնել տուրքը, յեթե նկատվում ե, վոր ցանքսերը փչացել են բնական պատահարներից, կամ գյուղացին չբավոր ե, կարմիր-բանակայինի ընտանիք ե ե այլն: Կարճ ասած՝

ըրջանային հարկային հանձնաժողովները վրա յե ընկնում ըրջանում հարկը հավաքելու ամբողջ գործն ու պատասխանատվությունը:

Գյուղական կոմունիստի և կոմյերիտմիութեան անդամի նպատակը պիտի լինի բացատրել գյուղացիներին այս տարվա միասնարկի որենքի առավելութուններն անցյալ տարվա որենքից և առանձին ուշադրութուն դարձնել այդ առավելութունների վրա ու մանրամասն բացատրել: Այդ առավելութուններից մեկը հենց այս ըրջանային հարկային հանձնաժողովներն են, վորի հետ հենց գլխից պիտի ծանոթացնել ամեն մի գյուղացու: Անհրաժեշտ է ամեն մի գյուղացու հավաստիացնել, թե բոլոր կարևոր խնդիրները, վոր վերաբերում են իր տնտեսութեանն ու միասնարկին, վրձնելու յե իր ըրջանի հարկային հանձնաժողովը: Դրանով գյուղացիութեանն ավելի ամուր ու հաստատ կերպով կկապվի խորհրդային իշխանութեան հետ, կըմասնակցի խորհուրդների աշխատանքներին և ավելի սերտ կերպով կմտենա իր ըրջանային գործադիր կոմիտեյին:

**ԳՅՈՒՂՄԻԱՍՀԱՐԿԻ ՄԵԾ ՄԱՍԸ ԹՈՂՆՎԵԼՈՒ ՅԵ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՆԵՐԻՆ.**

Ել ինչ է հարկավոր, վոր գյուղխորհուրդները, ըրջործկոմիտեերը, մի խոսքով մեր խորհրդային Հանրապետութեան սկզբնական և կարևոր խորհրդային բջիջներն ամուր կապվեն գյուղացիութեան հետ:

**Ա. Գհրաժեշտ է առաջին հերթին գյուղացու գլխավոր կարիքները հոգալ:**

Վորպեսզի ըրջործկոմը կարողանա գյուղացիները մեջ հարգ ու պատիվ ունենալ, վորպեսզի կարողանա գյուղացիների ուշադրութեանն արժանանալ, հարկավոր է, վոր ցա ունենա հաստատուն բյուջե, վորով կարողանա պահովել ու բավարարել գյուղի անհրաժեշտ կարիքները:

Այլապես գյուղում իշխանութեանը ստիպված կըլինի զբաղվել դատարկ, անիմաստ խնդիրների լուծումով: Յեթե գյուղական ուսուցիչը ուժիկ չստանա, յեթե բուժակը (ֆելդշերը) դեղ չունենա, այդպիսի պայմաններում ամենքին բավարարել, կանոնավոր աշխատանք կատարել վոչ մի կերպ հնարավոր չէ:

Հեղափոխական որինականութեան համար կուվելու ամենալավ միջոցը և գյուղացիութեանը դեպի խորհրդային շինարարութեան գրավելն այն է, յերբ կստեղծվի ըրջանի համար հաստատուն բյուջե, յերբ կողմենք ըրջանին ծածկելու իր կարևոր ծախսերը:

Անցյալ տարի ամբողջ խորհ. Միութեան մեջ ըրջանային գործկոմիտեերին ըրջանների կարիքներին համար հատկացված է յեղել 45 միլիոն ռուբլի: Նոր որեհեֆով 1925-26 տարվա համար Երջործկոմներին հատկացվելու յե 100 միլիոն ռուբլի: Այսպիսով Երջործկոմի բյուջեն յերկու անգամից ավելի յե մեծացել: Դեռ պետք է այնպես անել, վոր այդ 100 միլիոն ռուբլին ըրջործկոմներն ստանան հեշտութեամբ ու առաջին հերթին ծախսեն ամենապիտան կարիքները վրա:

**Պեճֆ է այնպես անել, վոր ամեն մի գյուղացի, յերբ մեկ ռուբլի հարկ է վճարում, իմանա, վոր այդ մեկ ռուբլուց քանիստ կուպեկը մնում է հենց իր**

երջանում, Երջանի ու իր գյուղի կարիքների համար:

Պետք է նաև ամեն գյուղացի իմանա, թե շրջանում մնացած այդ 40 կոպեկը ինչի վրա յե ծախսվում, վորպեսզի ինքն ել կարողանա անմիջականորեն մասնակցել այն խնդրի լուծմանը, ինչի վրա վոր ծախսվում է տուրքից հավաքված գումարը: Այդպիսով գյուղացիական լայն մասսաների կապը խորհրդային էշխանության հետ ավելի կամրապնդվի:

Հենց այս ել գյուղացիութունը դեպի խորհրդային շինարարութուն գրավելու ամենալավ միջոցը կըլինի:

---

